

# ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ (1885-1915) ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»էն 50 տարիներ առաջ  
Ռուբէն Սեւակին գրած բանաստեղծութիւնը՝

«Բայց մայրենի անուշ լեզուդ  
Մի մտնար որ հայերէն է»

Յովհաննէս Չիլիակիեան

**Բ**ողորին ծանօթ է, թէ ինչպէ՛ս բարբարոս թուրքերը դարերու ընթացքին, և մինչեւ վերջերս, Հայկական պատմական յուշարձանները և եկեղեցիները, Հայերէն Հեռք չմնայ ըսելով ուժականով քանդած են: Բայց այս բարբարոսութիւններուն ենթարկուողները միայն Հայերը չեն:

Նոյնպէս Հնադարեան (Antique) յունական և քիզանդական յուշարձանները և եկեղեցիները զո՛ւր գացած են թրքական բարբարոսութիւններուն:

Աս թրքական քանդումին զո՛ւր գացող վայրերէն մէկն է Մարմարա ծովուն վրայ Սիլվիի բերդաքաղաքը, որ կը գտնուի Պոլիսէն 65 քմ. դէպի արեւմուտք: Երոպական Թրակիոյ Հողամասին վրայ:

Նոյն ատէն Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղող Սիլվիի բերդաքաղաքը, բուն անունով «Սիլեմբրիա» Հին քիզանդական պատմական քաղաք մը եղած է:

Սիլվիի քիզանդական եկեղեցիները այնքան Համբաւ ունին եղեր, որ մեր Հօրեղբօր մեզի պատմածին Համաձայն, մինչեւ 1914 թուականը Անգլիայէն քիզանդազէտներ մասնաւորապէս Սիլվիի եկած են, որպէսզի Սիլվիի քիզանդական եկեղեցիներուն խճանկարները ուսումնասիրեն:

Ասօր, պատմական Սիլվիի բերդաքաղաքէն ոչ մէկ բան մնացած է: Ոչ բերդ, ոչ յունական յուշարձան, ոչ քիզանդական եկեղեցի և ոչ ալ քիզանդական խճանկար: Թուրքերը ամէն բան քանդած են: Եւ Սիլվիի այսօր, անճոռնի, «պեթոն» կառոյցներով լեցուած, թրքական քաղաքի մը վերածուած է, և միացած է Պոլսոյ:

Սիլվիի բերդաքաղաքը, որ մեր նախնիներուն բնակավայրը եղած է, մինչեւ 1922-ները, մեծ մասամբ բնակուած է յոյներէ և Հայերէ: Իսկ թուրքերը, Սիլվիի մէջ բերդաքաղաքէն դուրս «վարի թաղամասը» (Asagi Mahalle) ըսուած շրջանը կը բնակին եղեր, գոյացնելով քանի մը տամնեակ թուրք ընտանիքներէ բաղկացած աննշան փոքրամասնութիւն մը:

Սիլվիին այն աստիճան յունական քաղաք մը եղած է, որ Հոն բնակող Հայերը եղած են լաւ յոնասիօս, ինչպէս որ մեր Հայրը և մայրը սաճուն յոնարէն կը խօսէին:

Եւ այդ շրջանին Սիլվիի մէջ, նախակրթարան մը եղող «Աքանազեան» վարժարանէն զատ և անէլի բարձր Հայկական վարժարան մը չըլլալուն, Ռուբէն Սեւակ կը դրկուի Պարտիզակի Ամերիկեան Գոլէճը և յետոյ Պոլսոյ Պերպերեան վարժարանը, և 1905-ին ալ կը մեկնի Չուիցերիոյ Լոզան քաղաքը, ուսանելու տեղւոյն բժշկական Համալսարանը:

Մինչդեռ Ռուբէն Սեւակին քրոջ աղջիկը՝ Ատրիսէ Յակոբովիչ, Սիլվիի Հայկական վարժարանը աւարտելէ յետոյ, դեռ աղջրնակ ըլլարուն, Պոլսոյ մէկ Հայկական վարժարանը չի դրկուի, և Սիլվիի յունական միջնակարգ վարժարանը կ'արձանագրուի:

Եւ Ատրիսէ յունական վարժարանին մէջ շատ լաւ յունարէն յել և կարդալ սորված ըլլալու արախութեամբ, իր մօրեղբօր, Ռուբէն Սեւակին 1910-ին Լոզան յունարէն լեզուով նամակ մը կ'ուղարկէ... Եւ Ատրիսէն միջոց մը յետոյ, Ռուբէն Սեւակէն պատասխան նամակ մը կը ստանայ:

Աստեղ կը հրատարակէք Ռուբէն Սեւակի իր քրոջ աղջկան Ատրիսէին գրած նամակը:

Տեղին է նկատել, որ Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ Որդուն»էն 50 տարի առաջ գրուած Ռուբէն Սեւակի այս նամակ-բանաստեղծութիւնը մէնք կը Հաւատանք, որ նաՀատակ բանաստեղծին ազգային Հոգեբանութիւնը վկայող և պատմական արժէք ունեցող գրութիւն մըն է: ԱՀա Ռուբէն Սեւակի 1910-ին Լոզանէն Սիլվիի իր քրոջ աղջկան Ատրիսէին գրած նամակ-բանաստեղծութիւնը:

Իմ սիրելի փոքր Ատրիսէ,  
Ինձմէ բարձր ես Յոնարէնէ.  
Բայց հօրդ, մօրդ քնքն ու լեզուն  
Մի մտնար որ հայերէն է:

Եթէ միջոցդ մեր  
Մեծ դպրոցներ գնա՛ Ատրիսէ.  
Բայց մայրենի անուշ լեզուդ  
Մի մտնար որ հայերէն է:

Շոյլ մի ըլլար, ծոյր անօրէն է.  
Դուն շատ գիտուն եղի մեզմէ.  
Բայց մայրենի և Մորք լեզուդ  
Մի մտնար որ հայերէն է:

Լոզան 1910 Ռուբէն Սեւակ

